

7. Մանուկ Պէյ. — Ինչպէս վերը բացատրեցինք՝ Մանուկ Պէյ, մեր կարծիքով, Նազարէթ Ամիրայի չորրորդ մանչ տղան է: Ծնած է 1824 Յունուար 3ին: 1836 Օգոստոս 4ին մտած է Պաղտայի մէջ նոր բացուած Մուրատեան վարժարանը՝ իրրեւ առաջին աշակերտ եւ ելած է 1838 Նոյ. 12ին: Կը պատմուի թէ դպրոցին մէջ — իրրեւ գիտակից իր սոհմի ազնուականութեան — խընդրած է Վարժարանի տեսուչ Հ. Պետրոս Մինասեանէն որ չիօսի դպրոցի իր ընկերներուն հետ: Հ. Պետրոս՝ գուշակելով ըլլալէքը՝ կը պատասխանէ. «Շատ աղէկ, որդիս, մի՛ խօսիր: Սակայն պատանին Մանուկ մէկ կողմէ մեծ ձանձրոյթ գգալով, միւս կողմէ ընկերներուն դուարթ խաղերը տեսնելով՝ ինքնիրմէ կ'երթայ կը խառնուի ընկերներուն, կը խօսի ու կը խաղայ»¹⁸:

Մանուկ Պէյն է մեր կարծիքով Եղաթըմեան փեսայացոյցը¹⁹, սակայն բոլորովին անձանօթ մնացած է իր կնոջ անունը, ինչպէս անձանօթ է Մանուկ Պէյի եւ կնոջ մահուան թուականը եւ իրենց սերունդ ունենալու կամ չունենալու պարագան:

Մանուկ Պէյ ունի փոքրիկ գրական աշխատութիւն մը. թարգմանած է Bernardin de Saint-Pierreի (1737—1814) Paul et Virginie սիրուն բարոյալից վէպը եւ 1845ին հրատարակած է Վենետիկ սա խորագրով. «Պօղոս ու Վիրջինիա, թարգմանեաց ի դազդիականէ Մանուկ Պէյ Մահտեսի Աստուածատուրեան, աշակերտ Մուրատեան վարժարանի, Վենետիկ Սուրբ-Ղազար 1845»: Գրքին երկրորդ էջին վրայ կայ ձօնս. «Ի Յիշատակ Սիրելոյ Մօր իւրոյ Հանգուցելոյ Խոտիկեան Քարինֆօ Տիկնոջ, Կողակցի Նազարէթ Ամիրայի Մահտեսի Աստուածատուրեան»:

Մանուկ Պէյ իր Յառաջարանին մէջ կը գրէ. «...Աս սիրուն ու ախուր պատմութիւնն՝ արթնցնելով իմ սրտիս մէջ այ ինն յիշատակներ, թարգմանելու փափաք եկաւ ինձի: Հիմա կ'ընծայեմ Ազգիս իմ գրաւոր աշխատութեանս առ նուաստ երախայրիքը, ո՛չ այնչափ մտանազրին արժանի թարգմանութիւն մը սեպելով զառ, որչափ իրրեւ գրգիռ մը ինձի հասակակից երիտասարդաց»:

¹⁸ Բազմ. անդ, էջ 402, ծանօթ. 1:
¹⁹ Տե՛ս Մէլիս. Ախպար, 1906, թ. 4361:

Մանուկ Պէյի այս գիրքը շատ սիրուած ու կարգացուած է ժամանակին: 1859ին հաւանօրէն սպառած ըլլալով՝ երկրորդ տպագրութիւն մը կը տեսնէ՝ զարգարուելով այս անգամ բնագրական չորս պատկերներով: Հաւանական է որ Մանուկ Պէյ ողջ ըլլալով՝ ինքը թելագրած ըլլայ պատկերներու յաւելուածը:

1894ին երրորդ տպագրութիւն մ'աւ կ'ունենայ գրքոյիս՝ առանց ուրիշ որեւէ յաւելուածի կամ փոփոխութեան: Մանուկ Պէյ ո՞ղջ էր այս առին:

8—10. — Նազարէթ Ամիրայի վերջին երեք զաւակներու անուններն անձանօթ են: Բաճեան կը գրէ ասոնց մասին. «...զանց կ'առնեմ հոս նաեւ անոր (Նազարէթի) աղնուաշուք վաղամեռիկ որդիք ու զստերք՝ որոնց ոմանք իրմէ ետքը քողին այս անցաւոր կեանքը»²⁰: Հետեւաբար ոմանք ալ իրմէ առաջ մեռած են: Նազարէթ Ամիրա մեռած է 1835ին:

Հ. ԵՓՐԵՄ ՊՕՂՈՍԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՄՅԵՎՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

(Շարունակութիւն):

21. ՊԵՐՊԵՐԵԱՆ ՍԱՆՈՒՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1879) Կազմուած է 1879 Յունիս 1ին: Ընկերութիւնը 5 ոսկի զրկելով Դպրոցասիրաց Արեւելեան Ընկերութեան՝ նամակի մը մէջ կու տայ հարկ եղած բացատրութիւնը Ընկերութեան մասին: Ահա այդ նամակը.

Տէր, 1879 Յունիս 1ին վարժարանիս (Պէրպերեան) աշակերտներն մի Ընկերութիւն կազմեցին, նպատակ ունենալով Հայաստանի մէջ ուսումն տարածելու պաշտօն ստանձնող Ընկերութեանց օգնել: Այն Ընդհ. Ժողովոյ մէջ, որ գումարեցաւ Հոկտ. 14ին, Գործ. Ժողովս առաջարկեց, իր սկզբնաւորութիւն մի իւր նպատակի գործադրութեան 5 ոսկեոյ գումար մի յղել ձեր ազգաչէն Ընկերութեան եւ այս առաջարկն բոլոր ժողովոյն կողմէն միաձայնութեամբ ընդունուեցաւ: Ներեցէք սակայն եթէ կը համարձա-

²⁰ Բազմ. անդ, էջ 403:

կիմք այսքան փոքր գումար մի իրր նպատակիւ ձեզ. գիտէք թէ Ընկերութեան մի առաջին քայլերն, ինչպէս մի մանկան, խիստ տկար են. ժամ մի յառաջ մեր կարօտ Հայրենաց օգնելոյ փոյթն մղեց զմեզ այս որոշման...:

Դիւան Գործ. Ժողովոյ Պէրպերեան Սանուց Ընկերութեան.

Ատենադպիր	Ատենապետ
Վահան Յ. Մամասեան	Յովհ. Թ. Արամեան ⁶⁸

Ընկերութիւնը 1880ին 5 ոսկի կը յանձնէ Խասդուղի Կիլիկեան Ընկերութեան՝ ինչպէս Ջէյթունի Կիլիկեան վարժարանին⁶⁹: 1881ին ալ 5 ոսկի կը զրկէ Դպրոցասէր Հայուհեաց Ընկերութեան⁷⁰:

Կը կարծենք թէ Ընկերութիւնս պահած է իր դոյութիւնը մինչեւ 1895, թէեւ 1881էն սողին չունինք որ եւ է նշմար իր մասին:

Արլօյտանակի ցանկին մէջ չենք գտներ Ընկերութիւնս:

1908էն վերջը կազմուած «Պէրպերեան Սանուց»ը շարունակութիւնը չէ այս Ընկերութեան:

21ա. ԱՂԳԱՍԻՐԱՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1879) Հիմնուած է 1879 Նոյ. 4ին (Լրագիր, Կ. Պ. 1879, թ. 1118): Ուրիշ տեղեկութիւն չունինք:

22. ԱՂԲԱՏԱՆԵԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1880) Սերամիէ, ինչպէս տեսանք նախապէս, ունեցած է իր «Աղբատասիրաց Ընկերութիւն»ը, որ երկար տարիներ տեսած չէ: Սակայն թաղին մէջ հինէն ի վեր երկար տան դոյութիւն ունեցած է «Տնանկ աղբատաց Հոգաբարձութիւն» մը, որ կանոնաւոր «Տնար» մ'աւ ունեցած է, ինչպէս գեղեցիկ կերպով ցուցուցած է Հմայեակ Բաճ. էքսէրեան⁷¹:

Սերամիէ թաղին մէջ 1879էն սկսած պէտք տեսնուած է յատուկ կազմակերպու-

⁶⁸ Թէրթ. Լիֆեթար, 1879, թ. 706:
⁶⁹ Մասիս, 1880, թ. 2563:
⁷⁰ Անդ, 1881, թ. 2805:
⁷¹ Տե՛ս Յիշատակարան, անդ:

թեան մը՝ թաղին աղբատ եւ հիւանդ անդամները խնամելու համար⁷²: Ընկերութիւն մը հիմնելու գաղափարը կը յղանայ Համբիկ Ռուբէնեան կամ Մանուկեան: 1880 Յունիս 19ին կը հիմնուի Ընկերութիւնը: Ս. Սաչ վարժարանին մէջ հաւաքուած 70 աղքատավարժարանին մէջ հաւաքուած 70 աղքատավարժարան Ընդհ. Ժողով գումարելով՝ կ'ընտէր անձեր Ընդհ. Ժողով գումարելով՝ կ'ընտէր արեն Մայր Դիւան եւ Տնօրէն Խորհուրդ «Աղբատասիրաց Ընկերութեան», որուն գեղակերտ գանձանակը կը շինէ Պապաճեան Շիշմանեան⁷³:

Ընկերութիւնը կը հիմնուի նախ միայն Սերամիէ թաղին համար. յետոյ երբ հետգհեաէ Սիւրաբի միւս թաղերէն ալ անդամներ կը դուրին եւ Ընկերութիւնը միւս թաղերուն աղքատներն ալ կը խնամէ⁷⁴: 1883ին գումարուած Ընդհ. Ժողովը Ընկերութեան Կանոնադիրը կազմած ատեն՝ անոր ճակատը կը գրէ. «Նպատակն է Սիւրաբի երկրից քաղից հիւանդ աղքատները ճիշտաբար կարմանել»⁷⁵, որմէ յայտնի կ'ըլլայ թէ 1883էն սկսած Ընկերութիւնը կը վերածուի «Երկրից քաղից Աղբատասիրաց Ընկերութեան» մը:

Կանոնադիրը կը բաղկանայ 30 Յօդարածէ, սովորական բաղանդակութեամբ: Անդամաւճարն է՝ շարաթական 20 փարս:

Ընկերութեան Ընդհ. Ժողովներուն նախադասած են Մատթէոս Եպս. Իզմիրլեան, Մկրտիչ Արքեպ. Երիւնեան եւ Գրիգորիս Եպս. Ալեքանեան, իսկ վարչական անդամներու անունները, յաջորդական տարիներու մէջ, կը դանէ հետաքրքրուողը էքսէրեանի վերջիչեալ գործին մէջ (էջ 48—169):

Ընկերութեան հիմնադիրներն են. Տօթթ. Պետրոս Բէլիզեան, Համբիկ Ռուբէնեան, Անթուան Ռոզոյաթթօ, Միհրան Գարամաճեան, Գարբէլ Արարճեան, Գէորդ Սաչատուրեան, Վաղինակ Փափազեան⁷⁶:

⁷² Անդ, էջ 44—46:
⁷³ Անդ, էջ 46:
⁷⁴ Հմմտ. Թէրթ. Լիֆեթար, 1882, թ. 1338:
⁷⁵ Յիշատակարան, անդ, էջ 47:
⁷⁶ Անդ, էջ 155:

Ընկերութեան գործունէութեան մասին արդէն 1881ին գովեստով կը խօսուի⁷⁷: 1880—1885 տասնեակ հազար դուրուշ ծախսելով դարձանաձէ հարիւրաւոր աղքատ հիւանդներ: Միայն 1885ին աւելի քան 200 հիւանդ դարձանաձէ⁷⁸:

Աղքատախնամը 50 տարի անընդհատ կը գործէ եւ ոչ միայն Սկիւտարի երեք թաղերու, այլ եւ անկէ դուրս կը տարածէ իր խնամքն ու հոգածութիւնը աղքատին, հիւանդին, որրին ու սյրին: 50ամեայ գործունէութեան Յորելեանը կը տօնուի 1930ին եւ այդ առթիւ լոյս կը տեսնէ Հմայեակ Բաճ. Էքսերճեանի գրչէն Յիշատակարան Յիւնամեայ Յորելեանի երկից քաղից Աղքատախնամ Հոգաբարձութեան Սկիւտարի (Կ. Պ. 1930), որ մանրամասնօրէն կը պատկերացնէ Ընկերութեան կեանքը:

1930էն վերջ ալ շարունակած է Ընկերութիւնը իր աղքատախնամ գործունէութիւնը:

23. ԱՌԵՆՏՐԱՎԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (?)

Թորգոմեանէ⁷⁹ յիշուած է Ընկերութիւն, առանց որեւէ անդրադոյն լուսարանութեան: Ոչ մէկ յիշատակութեան հանդիպած են հայ թերթերու մէջ:

24. ԽԱՅՈՂԱՎԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (?)

Այս ալ միայն Թորգոմեանէ կը յիշուի⁸⁰ Սեւմարէի Ընկերութեանց կարգին, բայց ծանօթութիւն կը պակաս:

25. ՍԱՆՈՒՅ ԵՒ ՍԱՆՈՒՆԵԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1882)

Հիմնուած է 1882 Մայիս 24ին: Ընկերութեան «Գործադիր Անդամք» կը գրեն.

«Ս. Խաչ վարժարանի երկսեռ Սանուիս» աջակցութեամբ Պատ. Հոգաբարձութեան եւ Ընդհ. Դատարարակին Սանուց եւ Սանուիեաց անուն Ընկերութիւն մը հաստատած ըլլալով՝ որոշած ենք բաժանորդագրութեան հասոյթը... յատկացնել աղքատիկ ուսանողաց դպրոցական պիտոյից...:

⁷⁷ Մասիս, 1881, թ. 2813:
⁷⁸ Սիմոն Գարամաճեան, Յուշատեար, Կ. Պ. 1885, էջ 5—8:
⁷⁹ Երեմ. Չէլէպ, Գ., էջ 141:
⁸⁰ Անդ:

Գործ. Անդամք

Սանուց եւ Սանուհեաց Ընկերութեան

Ատենապետ	Մարտիրոս Ն. Արայճեան
Ատենադպիր	Համադաստ Ս. Խաբեան
Գանձապետ	Սահակ Ս. Ֆէսճեան
Հաւաքիչ	Յարութիւն Աւետիս
Թանգարանապետ	Արմենակ Ս. Սեղրոսեան ⁸¹

Ընկերութեան կանոնագրութիւնը կազմուած է 15 կէտերէ: Տեսնենք կարեւորները.

Ա. Ընկերութեան նպատակն է դպրոցական նիւթեր եւ ուսումնական առարկաներ գնել աշակերտաց գործածութեան համար:

Բ. Աղքատ եւ կարօտ ընկերակցաց դասադիրք, բուրբ եւ մեղան եւլն. օրիաբար հայքայքել:

Գ. Ընկերութիւնս բաժանորդական է. իւրաքանչիւր բաժինն է շաբաթը տասը փարայ: Ուղղոյն մէկ բաժինէ աւելի կրնայ գրուիլ.

Ե. Եթէ հասոյթից աղբիւրներն առատանան՝ կարօտ ընկերակցաց մինչեւ իսկ հանդերձեղէն տալ եւ զրօսանքի առեն կարգալու համար գանազան լրագրաց բաժանորդ գրուիլ եւ թանգարանն փոխացնել:

Զ. Ընկերութեանս հաշուեցոյցը ամէն տարեդարձի Ս. Եկեղեցոյ բակը պիտի կատարուի ի տես հասարակութեան:

Է. Ընկերութեանս մատակարարութիւնը պիտի կատարուի աշակերտաց միջոցաւ, որոնք կը կազմեն Գործադիր Մարմինն, որ կ'ընտրուի ի զիմաց աշակերտաց⁸²:

Ընկերութիւնը կրցած է ունենալ իր մատենագրարանը⁸³:

26. ԲԱՐԵՍԵՐԱՎԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1885)

Կազմուած է 1885 Փետրուարին Սեւմարէի երիտասարդներէն՝ օրինակ առնելով «Բարեգործական Ընկերութիւն»ը: Ունեցած է իր կանոնագիրը, մեզի անծանօթ: Ընկերութեան Գործադիր Ժողովի առաջին անդամներն եղած են.

Տիրոջան Սվաճեան	Ատենապետ
Գ. Աճէմեան	Ատենադպիր

⁸¹ Թէրնէմանը Էֆեֆար, 1882, թ. 1445:
⁸² Անդ:
⁸³ Արիւելիք, 1898, թ. 3883:

Ընդհ. Ժողովի Վարչութիւնը

Բարսեղ Աւետիսեան	Ատենապետ
Մանուկ Տէր Յակոբեան	Ատենադպիր

Ընկերութիւնը Թաղ. Խորհուրդի աջակցութեամբ հասութարեր խանութ մը կը շինէ՝ վրան սենեակով: Իսկ 1890 Փետր. 25ին 19 աղքատ աշակերտի եւ 41 աշակերտուհիի զգեստ կը շինէ:

Ընկերութեան վերջին Գործ. Ժողովը կազմած են հետեւեալները.

Յովակիմ Գալէմքիարեան	Ատենապետ
Յակոբ Մամբեան	Ատենադպիր
Մ. Պատմաճեան	Գանձապետ
Մ. Գասպարեան	Համարակալ
Լեւոն Եիշմանեան	Անդամ
Մ. Գազարեան	Անդամ
Աղեքսանդր Գուլումճեան	Անդամ

«Բարեսիրական Ընկերութիւն»ը Լսարան ալ ունեցած է, ուր խօսած են Նար-Պէյ եւ Օրմանեան Սրբադանները, Պէրպէրեան եւ ուրիշներ, որոնց ճտուերէն ոմանք տպուած եւ ծախուած են ի նպատակ Ընկերութեան:

Ընկերութիւնս կը զարդի 1892ին, բայց իր գործը կը շարունակուի ուրիշ անունով⁸⁴:

«Բարեսիրական Ընկերութիւն» կը վեկազմուի 1913ին, ունենալով առաջին Դիւան.

Տօքթ. Խորխոռունի	Ատենապետ
Գ. Բիւրաեան	Ատենադպիր

Իր նպատակը կ'ըլլայ՝ Թաղին վարժարանին յառաջդիմութեանը նպաստել բարոյապէս եւ նիւթապէս⁸⁵:

27. ԿԱՐՕՏ ՈՒՍԱՆՈՂԱՅ ԽՆԱՄԱԿԱՆՈՒԹԻՒՆ (1892)

Սեւմարէի «Բարեսիրական Ընկերութեան» գաղարուճէն վերջ՝ կը կազմուի նոր Ընկերութիւն մը՝ «Կարօտ Ուսանողաց Խնամակալութիւն» անունի ներքեւ, որ կ'ունենայ իր կանոնագիրը եւ հետեւեալ նպատակները.

1. Ս. Խաչի երկսեռ վարժարանաց աղքատ աշակերտաց զրեհական պիտոյքը հոգալ.

⁸⁴ Հմայեակ Բաճ. Էքսերճեան, Յիշատակարան, Կ. Պ., էջ 196—198:
⁸⁵ Ժամանակ, 1913, թ. 1600:

2. Այդ աշակերտաց ցերեկեայ ճաշը տալ.

3. Երկսեռ վարժարանաց զրասեղաններ շինել.

4. Այդ աշակերտաց տարին մի անգամ զգեստ պատրաստել.

5. Մանկապարտէզի փոքրիկներուն զրազման առարկաներ հոգալ.

6. Զբոսալարժ աշակերտներէն արժանաւորացոյնները բարձրագոյն կրթարան զրկել եւ անոնց երթեւեկի ծախքերը հոգալ:

1892ին վերջերը կ'ընտրուի — Թաղ. Խորհուրդէն — առաջին Գործ. Ժողովը.

Յովակիմ Գալէմքիարեան	Ատենապետ
Աղեքսանդր Գուլումճեան	Ատենադպիր
Լեւոն Եիշմանեան	Գանձապետ
Յակոբ Մամբեան	Համարակալ

Ուշագրաւ է որ Ընկերութեան Գործ. Ժողովը Թաղականութենէ կ'ընտրուի: Յայտնի է որ 1890—1908ի շրջանը թրքահայութեան ընկերական կեանքի եւ գործունէութեան ամէնէն յուր շրջանն է, ուր համբիւն արաստիւր գրեթէ մեռելութիւն պարզեցած էր Հայ Մշակ. Ընկերութիւններու: Այդ շրջանին «Ընկերութիւն» բառն անգամ թերան առնելու չէր: Այս է պատճառը որ շրջանու Ասատուր 1901ի ընդարձակ Տարեցոյցին մէջ «Ընկերութիւն» բացատրութեան տեղ՝ «խումբ» կամ «ակումբ» կը գործածէ (հմտ. անդ՝ էջ 231):

«Կարօտ Ուսանողաց Խնամակալութիւն»ը իր գոյութիւնը կը պահէ 1892—1921 եւ կը գործադրէ իր նպատակները՝ աղքատ աշակերտներու զգեստ կարելով, մանկապարտէզի եւ վարժարանին զրասեղաններ շինելով, աղքատ աղոց զրեհական պիտոյք եւ ձեռագործի նիւթ հայթայթելով:

1921ին կը զարդի Ընկերութիւնը⁸⁶:

28. ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1908)
Հիմնուած է 1908 Յուլիսին, նպատակ ունենալով «ժողովրդային գարգացումը փոքրիկական, իմացական եւ բարոյական տեսակետներով⁸⁷»:

⁸⁶ Տե՛ս Հմայեակ Բաճ. Էքսերճեան, Յիշատակարան, անդ, էջ 198—200:
⁸⁷ Սուրբանդակ, 1908, թ. 101:

1908 Սեպտեմբերին կը միանայ «Յառաջ-դիմական ազատական Ակումբ» Ընկերու-թեան հետ⁸⁸ :

29. ՅԱՌԱՋԳԻՄԱԿԱՆ ԱԶԱՏԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ (1908) Կազմուած կ'երեւայ 1908 Յուլիս-Օգոստոսին: Իր ծրագիրն ու նպատակը անձա-նօթ է: 1908 Սեպտեմբերին կը միանայ «Ուսումնասիրաց Միութեան» հետ՝ իր խնդրանքով⁸⁹ :

30. ԱՐՈՒՆԵՍԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1908) 1908 Սեպտ. 26ին իր առաջին ներկայա-ցումը կու տայ Պաղար Պաշտի թատրոնին մէջ, դերասանապետութեամբ Խ. Նարի-կեանի: Թատերախումբն է Թ. Թէրզեանի «Նահատակութիւն Սրբուհի Սանդուխտի»⁹⁰: Թատերական Ընկերութիւն մ'եղած կ'ե-րեւայ:

31. «ԲԱՅՅԻ» ԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1908) Հիմնուած է 1908ին⁹¹: 1910ին երեկոյթ կու տայ⁹², անշուշտ բանաստեղծութիւննե-րով: 1918—1919ին միացած է Սեւրմէի «Յառաջդիմական Միութեան» հետ՝ վերա-ծուելով «Բաֆֆի Յառաջդիմական Միու-թեան»:

32. ՅԱՌԱՋԳԻՄԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1908) Կազմուած է 1908ին⁹³: 1913ին ունէր իր յատուկ սրահը՝ բանաստեղծութեան եւ հաւա-քոյթներու համար: Եղած է մարզական Միութիւն մը: Միութիւնը 1918—1919ին միանալով «Բաֆֆի» Լսարանական Միութեան» հետ՝ կ'ունենայ աւելի աշխոյժ կեանք:

33. ՏԻԿՆԱՆՑ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ (1908) Սուրբանդակ⁹⁴ կը մեշէ Ընկերակցու-թիւնս, որ 1908 Հոկտ.ին ցարգահանդէս սարքած է, ուր Արշակ Զօպանեան «Ակնցի-ներու բանաստեղծութեան» վրայ կը բանա-խօսէ: Ընկերութեան Ատենապետն է Տիկ Արշակունիի Թէոդիկ:

Ընկերակցութիւնը 1920 Հոկտ. 18ին վե-րակազմուելով՝ կը կոչուի «Սկիւտարի Տիկ-
⁸⁸ Անդ:
⁸⁹ Անդ:
⁹⁰ Անդ, Թ. 99:
⁹¹ Մարմնամարզ, Կ. Պ. 1913, էջ 162:
⁹² Ժամանակ, 1910, Թ. 469:
⁹³ Մարմնամարզ, 1913, էջ 161—162:
⁹⁴ 1908, Թ. 115:

նանց Միութիւն»: Իր վարչական Մարմին-ներն էին.

Ընդհ. Ժողովի Դիւան

Տիկ. Կիւրիկ Հալէպլեան Ատենապետ
Օր. Ա. Փափազեան Ատենազպիր

Վարչական Ժողով

Տիկ. Տօքթ. Օֆէլիա Ա. Ատենապետ
Օր. Գ. Պէյլիւշ Բ. Ատենապետ
Օր. Ս. Եօրօճեան Ա. Ատենազպիր
Օր. Վ. Գէորգեան Բ. Ատենազպիր
Օր. Ա. Թաղուբեան Գանձապետ
Օր. Զ. Զաքարեան
Օր. Ա. Յովակիմեան⁹⁵

Միութիւնը փութացած է օգնութիւն հասցնել Սկիւտարի մեծ հրդեհէն փրտուող-ներուն⁹⁶, որուն համար հայ թերթը կը գրէ. «... խղճի պարագ մըն է մեզի համար միշտ-տակել այն անձերը եւ մարմինները, որոնք այդ անմիջական օժանդակութեան մէջ իրենց բաժինը բերին անձուիրօրէն: Առաջին գծի վրայ պետք է յիշել Սկիւտարի Տիկնանց Միութիւնը, որուն ներկայացուցիչները՝ Տիկնայք Պոյանեան, Հալէպեան եւ բժշկուի Տիկ. Օֆէլիա, ազատին առաջին օրէն սկսած իրենց անձնուէր ջանքերը կը շարունակեն ցարդ իրենց ընկերուհիներուն հետ⁹⁷»:

34. ԱԳԱՆՈՒԷՐ ՕՐԻՈՐԿԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1909) Հաւանօրէն կազմուած է 1909ին, Սկիւ-տար: «Ազգանուէր Հայուհեաց Ընկերու-թեան» 1908—1910ի «Երկամեայ Տեղեկա-գիր»ին մէջ հետեւեալ տեղեկութիւնը կը տրուի Ընկերութեանս հիմնուած մասին. «Նորափթիթ օրիորդներ. Աննա Նախաշեան, Աննա Սեւեան, Արմինէ Մելիքեան, Արփինէ Անէմեան, Եւգինէ Մէխտերեան, Էմմա Ասատուր, Հնգամնդ Նարկիլէմեան, Նար-դիկ եւ Նարկիլ Փանոսեան, Նուարդ Պօշ-նակեան միանալով, Ազգանուէր Օրիորդաց Միութիւն անունն ներքեւ, վիճակահանու-թիւն մը սարքեցին Բերայի մէջ եւ հասցրթ յատկացուցին մեր վարժարաններուն...: Հակառակ իրենց շատ փոքր հասակին, այն-քան լուրջ եւ կանոնաւոր գործունէութիւն մը ցոյց տուին որ մեծ յոյս կու տայ մեզի թէ

⁹⁵ Ժողովուրդի Չայնը, 1920, Թ. 618: — Թէ-
դիկ, Ամէն. Տար. 1921, էջ 304:
⁹⁶ Ժողովուրդի Չայնը, 1921, Թ. 869:
⁹⁷ Անդ, Թ. 880:

որ մը Ընկերութեանս լաւագոյն գործիչները պիտի ըլլան եւ արժանապէս վարեն զայն⁹⁸»:

Միութեան վիճակահանութենէն ունե-ցած հասոյթն է 1672 ոսկի⁹⁹:

35. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԶԱՐԳԱՑՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1908—1909)

Մարզական Ընկերութիւն մըն է Սեւ-մէի «Յառաջդիմական Միութեան» եւ «Բաֆֆի Միութեան» հետ յիշուած 1911 Ապրիլին¹:

36. «ԲԱԶՈՒԿ» ՄԱՆԱՊԱՇՏՊԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1911)

Կազմուած է 1911ի սկիզբը: Ունեցած է եր Ծրագիր-Կանոնագիրը²: 1912ին կը սարքէ վիճակահանութիւն մը³: Իր մասին կը գրէ Էքսէրճեան⁴. «1911ին Սկիւտարի երեք թա-ղերէն քանի մը երիտասարդներ միանալով կը ձեռնարկեն Բազուկ մանկապաշտպան Միութիւն մը կազմելու, նպատակ ունենա-լով որք տղաքները պատասխարել տան մը մէջ՝ անոնց սնունդը եւ կրթութիւնը ստանձ-նելով»:

1914ին տպուած քարտի մը վրայ կը տեսնուի Միութեան խնամած Որբերու մէկ խմբանկարը — 13 տղաք եւ Տիկին մը, որ անշուշտ մայր — խնամակալուհին է:

Միութեան Դիւանը կը կազմէին 1914ին.

Պետրոս Ազապէյեան Ատենապետ
Սիմոն Ալաճաճեան Ատենազպիր

Դիւան 1915ին

Թորգոմ Պօյանեան Ատենապետ
Լեւոն Յովհաննէսեան Ատենազպիր

Վարչական Խորհուրդ 1916ին.

Սեփոն Դուրեան Ատենապետ
Գրիգոր Յովակիմեան Ատենազպիր
Երուանդ Պարսամեան Գանձապետ
Պետրոս Ազապէյեան Համարակալ
Համբարձում Զուխաճեան Մատակարար
Վարդէիլ Իրէքճեան Դեր-Մատա-կարար

Կարապետ Ալիքսանեան
Մ. Տօնէյեան
Մ. Եղիշեան
Լեւոն Յովհաննէսեան

⁹⁸ Երկամեայ Տեղեկագիր, 1911, էջ 9:
⁹⁹ Անդ, էջ 60:
¹ Մարմնամարզ, 1911, էջ 89: — Տե՛ս նաեւ
Ս. Յարս, Փարիզ 1952, Թ. 536:
² Ժամանակ, 1911, Թ. 736:
³ Անդ, 1912, Թ. 998. 1913, Թ. 1647:
⁴ Յիշատակարան, էջ 210:

Այս Միութիւնը իր պաշտօնը կը շարու-նակէ մինչեւ 1916ի վերջերը՝ ունենալով իր Խնդրուքեան տակ մինչեւ տասներկու որ-բեր եւ այդ թուականէն վերջ Միութեան ան-գամները զինուորական ծառայութեան կո-չուելով Պոլսէն կը մեկնին Ս. Մաշի Թաղ. Խորհուրդայ յանձնելէ յետոյ իրենց գոյքերն ու գրամը⁵:

37. ՀԱՅ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱՐԱՆ ԱԿՈՒՄԲ (1912)

Կը կոչուի նաեւ «Հայ Մարմնամարզա-րան Միութիւն»⁶: Հիմնուած կ'երեւայ 1912ի վերջերը: Հիմնադիրն է Մ. Սկրեան: 1913 Մայիս 26ին Միութեան տարեկան մրցումները տեղի ունեցած են: Միութեան գործունէութիւնը կը յիշուի յաճախ, մերթ քննադատուելով⁷:

38. «ԱՐՏՕՍԻ» ՕՐԻՈՐԿԱՅ ՈՐԲԱՆԱՄ ՄԻՈՒԹԻՒՆ (1912—1913)

Այս անունին առաջին անգամ 1913 Օգոստոսին հանդիպած են: Հետագայն (Ժա-մանակ) կը գրէ. «Սեպտ. 4 Զորքարթի գիւղեր, Սկիւտար Թէֆէի թատրոնին մէջ ժամը 9ուկէսին, ի նպատակ Միութեան, տօսը» Յրիորդաց Որբախումբ Միութեան, Յէլէկեան թատերախումբը կը ներկայացնէ «Բոյր Թերեզա» տամ 2 արար, ինչպէս նաեւ խիստ գեղեցիկ զուեշտ մը⁸:

Հաւանական է որ հիմնուած ըլլայ 1912—1913ին:

39. ՊԵՐՊԵՐԵԱՆ ՍԱՆՈՒՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1913)

«Պէրպէրեան Սանուց Ընկերութեան» անունը շատոնց մոռցուած էր, երբ 1908ի Սահմանադրութեան ուրախ օրերը կ'արթն-ցընեն համանուն վարժարանի նոր ու հին ա-շակերտներու մէջ փափազ մը՝ կազմելու Միութիւն մը: Սուրբանդակ⁹ արձագանգ կ'ըլլայ այն ճիգերուն, որոնք կը թափուին նորինորոյ կազմելու համար Մշակութ. Միութիւն մը՝ Պէրպէրեան Սանուց անու-նով:

⁵ Յիշատակարան, անդ, էջ 210—211:
⁶ Մարմնամարզ, 1913, էջ 88:
⁷ Տե՛ս Ժամանակ, 1914, Թ. 1821: — Ժողո-
վուրդի Չայնը, 1921, Թ. 890, 983: — Թէօդիկ,
Ամէն. Տարեց. 1921, էջ 308:
⁸ Հետագայն, 1913, Թ. 1560:
⁹ 1908, Թ. 75, 117:

Միութիւնը կը կազմուի սակայն բաւական ուշ — 1913ին: Միութեան Հիմնադիրը պատրաստելու համար կը կազմուի Յանձնախումբ մը հետեւեալներէ.

- Արիս Ծէսճեան
- Նշան Գ. Գալֆայեան
- Տիրան Չրաքեան
- Լեւոն Թաչճեան
- Տիրքան Թէքէյեան

1913 Օգոստ. 4ին գումարուած Ընդհ. Ժողովը կ'ընդունի կազմուած Հիմնադիրը, որ ունի 37 Յօդուած եւ բաղաձայն կէտեր եւ հրատարակուած է 1914ին առանձին գրքոյկով: Տեսնենք քանի մը Յօդուածներ. «Պէրպէրեան Սանուց Միութիւնը իրեն նպատակ ունի գործել ի պատիւ վարժարանի Հիմնադրին, յօգուտ վարժարանի Սանուց եւ Հայ հասարակութեան» (Յօդ. 1): «Պէրպէրեան վարժարանին մէջ կրթութիւն տալ կարօտ ուսանողներու եւ համարարաններու մէջ Պէրպ. կարօտ սաներու ուսումը ապահովել» (Յօդ. 2). «Միութիւնը պիտի հրատարակէ Տարեգիր մը» (Յօդ. 3). «Միութիւնը պիտի սարքէ տարեկան խնայք մը, վարժարանին ամսվերջի հանդէսին օրը» (Յօդ. 6). «Անդամոց տարեկան բաժնեկիւններու նուազագոյն չափն է քսան եւ առաւելագոյնը հարիւր քսան դրուշ» (Յօդ. 33):

Միութեան Ընդհ. Ժողովի Առժամեայ Դիւանը.

- Նշան Գ. Գալֆայեան
- Վ. Սարգիսեան
- Ատենապետ
- Ատենադպիր¹⁰

Միութիւնը 1920ին վերակազմուած է¹¹:

40. «ԱՐՏԻԵԼԻ» ՇԱՀԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1913)

Կը թուի թէ կազմուած է 1913ին: 1914 Յունիսին կը մեղուի առաջին անգամ, երբ արդէն «լուծման» շուկներ կան: Ընկերութեան Ընդհ. Ժողովի Ատենապետ՝ Ն. Վալտէյեան եւ Ատենադպիր՝ Պ. Գիւտեան կը հերքեն «լուծումը» եւ կը հաւատան թէ «Ընկերութիւնը աւելի լուրջ թափով մը գործի ձեռնարկած է բարեփոխուած կանոնագրով»¹²:

¹⁰ Պէրպէրեան Սանուց Միութիւն, Կ. Պ. 1914, էջ 14:
¹¹ Ժողովուրդի Չայքը, 1920, թ. 1593:
¹² Ժամանակ, 1914, թ. 1869:

41. «ՀԱՅՈՐԴԻ» ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ (1914)

Կազմուած է 1914ի սկիզբը: Նախաձեռնողն է Գառլօ Շահին: Մարդական Միութիւն մըն է: Իրրեւ մարդարան վարձած էր Պաղլար Պաշը Զիչէֆճի պարտէզը: Կը մտադրէր ունենալ իր Մատենադարանը եւ սարքել դասախօսութիւններ¹³:

42. ՍԿԻՏԱՐԻ ՈՐՐԱՆՆԱՄ ՄԻՈՒԹԻՒՆ (1918)

1914—1918ի ազդային ահուկի ոգիերգութեան վերջ առաջին Որրախնամ Միութիւններէն մին է Սեւրամիէի մէջ 1918 Նոյեմբերին կազմուած «Սկիտարի Որրախնամ Միութիւն»ը, որ 1918 Դեկտ. 9ին բացումը կը կատարէ իր Որրախնամ իր ծախքով պատասխարելով 50 սրբ, իրրեւ սկզբնաւորութիւն¹⁴:

Միութիւնը 1919 Յունուարին կը ստանայ 2045 դրուշ եւ 47 գլխարկ նուէր¹⁵: 1919 Ապրիլին ալ կը ստանայ զանազաններէ 16,082 դրուշի նուէր¹⁶:

43. «ԱՅԳ» ՕՐԻՈՐԴԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1918)

Այս Միութիւնը կազմուած է 1918ի վերջը եւ արդէն 1919 Յունուարին հանդէս կը սարքէ¹⁷: Ունէր 20 անդամ, հետեւեալ վարչական կազմով.

- Տիկ. Ե. Պարտիզպանեան
- Օր. Ա. Մամճեան
- Ա. Սէմէրճեան
- Ե. Սէմէրճեան
- Պ. Ժամկոչեան
- Վ. Անտոնեան
- Զ. Գալէնտէրեան¹⁸:

44. Ռ. Յ. Պ. ԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1919)

Պէրպէրեան վարժարանի ոչակերտութիւնը 1919ի սկիզբը կազմած է «Ռէքէտու Յ. Պէրպէրեան Լսարանական Միութիւն»ը, որ 1919 Ապրիլին ներկայացում մը տարով 4950 դրուշի նուիրատուութիւն մը կ'ընէ Սեւրամիէի «Որրախնամ Միութեան»¹⁹: Միութիւնը ունէր իր սրահը եւ կու տար զեղարուեստական երկերներ²⁰:

¹³ Անդ, թ. 1772:
¹⁴ Անդ, 1918, թ. 3391: — Հմմտ. ձախառնարտ, 1918, թ. 4:
¹⁵ Անդ, 1919, թ. 3419:
¹⁶ Անդ, թ. 3487:
¹⁷ Անդ, 1919, թ. 3545:
¹⁸ Ամէնու Տարեց., 1921, էջ 308. 1922, էջ 370:
¹⁹ Ժամանակ, 1919, թ. 3487:
²⁰ Ժողովուրդի Չայքը, 1922, թ. 1028:

45. ԲԱՅՅԵԻ ՅԱՌԱՋԻՄԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1919)

Սեւրամիէի «Րաֆֆի Լսարանական Միութիւն»ը եւ «Յառաջդիմական Միութիւն»ը 1919ի սկիզբները միանալով՝ կազմած են «Րաֆֆի Յառաջդիմական Միութիւն»ը, որ ունեցած է իր Լսարանը:

Միութիւնը օգտակար եղած է իր Լսարանը տրամադրելով զեղարուեստական հանդէսներու²¹ եւ մասնաւորապէս 1921ի Սկիտարի մեծ հրդեհէն վերջ սրտասպարելով զժրախտ արկածեալները²²:

1921ին Միութիւնը ունէր 150 անդամ: Վարչական Խորհուրդի կազմն էր.

- Կարապետ Տէօօլէթեան Ատենապետ
- Վ. Տիրատուրեան
- Լ. Միքայէլեան
- Յ. Խիւտովէրտեան
- Տօքթ. Ա. Տէր Անդրէասեան
- Յ. Գալֆայեան
- Զ. Թօղանեան
- Մայր Դիւանի կազմը.
- Գ. Շէհրիկեան
- Ե. Մեսրոպեան

Միութիւնը ունէր նաեւ նուագախումբ մը²³:

46. ՕԺԱՆԿԱԿ ՄԻՈՒԹԻՒՆ (1919)

«Սկիտարի Որրախնամ Միութեան» ստարերու համար 1919ին կազմուած է «Օժանկակ Միութիւն» մը, որ կարճատեւ գոյութիւն մ'ունեցած է: 1920 Հոկտ.ին «Որրախնամ Միութիւն»ը ինքնարաւ ըլլալուն՝ հարկ չի տեսնուիր շարունակելու «Օժանկակ Միութեան» գործերը: Վերջինս իր գոյքերը կը յանձնէ «Որրախնամ»ին²⁴:

47. ՀԱՅ ԵՐԱՆԱՍԻՐՏՈՒՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ (1919)

Ամերիկեան Ազգիկանց Կոլէճի հայ ոչակերտահները 1919 Մայիսին կը կազմեն «Հայ Երջանաւարտուիներու Միութիւն»ը²⁵: Այդ Միութիւնը զեռ չկազմած՝ անոնք արդէն զինազարդէն սկսած էին դրամ հաւաքել հայ սրբերուն համար: Միութիւնը կազմէր վերջ՝ իրենց հաւաքած գումարը կը

²¹ Ժամանակ, 1919, թ. 3545:
²² Ժողովուրդի Չայքը, 1921, թ. 869:
²³ Ամէնու Տարեց., 1921, էջ 304:
²⁴ Ժողովուրդի Չայքը, 1920, թ. 585, 608:
²⁵ Ժամանակ, 1919, թ. 3529, 3535:

հասնի 75,000 դրուշի, զոր կը բաժնեն Առաւելապետը, Օրթապետը, Սկիտարի, Պոյաճիղիւղի, Մաքրիղիւղի, Կէտիկիւղի Որրանոցներուն եւ Սկիտարի շ. Կարմիր Խաչի Տան ու Գառլէղի շ. Կարմիր Խաչի Հիւանդանոցին, իրենց պահելով միայն 50 սակի²⁶:

Միութեան Դիւանի կազմը.

- Տիկ. Ա. Մանուկեան
- Տիկ. Զ. Գոնչէկիւլ
- Օր. Գ. Գալաֆեան
- Ատենապետ
- Փոխ-Ատենապետ
- Ատենադպիր²⁷

Միութեան հաւաքավայրն էր, 1922ին, Բերա Էսայեան վարժարան²⁸:

48. ՀԱՅ ԵՐԱՃՇՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1919)

Թորոզեան²⁹ Սեւրամիէի մէջ կը մեծ «Երաճշտախրական Ընկերութիւն» մը, առանց որեւէ ճշդումի: Հնութեան մէջ չենք հանդիպած այդպիսի Ընկերութեան մը Սեւրամիէի մէջ: Մեզի ծանօթ է Սեւրամիէի «Հայ Երաճշտական Միութիւն»ը, որ առաջին անգամ 1919 Մայիսին երեւան կու գայ եւ զեղարուեստական վ. Սարգիսեանի համերգներ կու տայ 120 հոգինոց երկեսո երգչանոցով մը³⁰: 1922ին երգչախումբի զեղարուեստ էր Գ. Սիւնի եւ խումբը 60 հոգինոց³¹:

49. ԹԱՏԵՐԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1919)

Հաւանօրէն 1919ի գարնան կազմուած է «Թատերասիրաց Միութիւն»ը: Ներկայացում կու տայ «Թէփէ»ի թատրոնին մէջ³²:

50. «ԱՐՏԱՒԱՋԻ» ԹԱՏԵՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1919—1920)

Հանդիպած ենք միայն Թէոդիկի քով³³: Հիմնուած ըլլալու է 1919—1920ին:

(Շարունակելի:) Է. ԵՓՐԵՄ ՊՕՂՈՍԵԱՆ

²⁶ Անդ, թ. 3539:
²⁷ Ժամանակ, 1919, թ. 3548:
²⁸ Ժողովուրդի Չայքը, 1922, թ. 1064:
²⁹ Երեւ. Չէլչէպ., անդ, Գ., էջ 141:
³⁰ Ժամանակ, 1919, թ. 3527, 3571:
³¹ Ժողովուրդի Չայքը, 1922, թ. 1104:
³² Ժամանակ, 1919, թ. 3662: — Հմմտ. Թէոդիկի, Ամէն. Տարեց., 1921, էջ 308:
³³ Անդ: